ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ. հոկտեմբերի 7-ից 10-ը Շվեյցարիայի Համադաշնություն (ք. Ժնև) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Սոսե Ստեփանյան – ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Շվեյցարիայի Համադաշնություն, ք. Ժնև, 2024թ. հոկտեմբերի 7-ից 10-ը

3. Հրավիրող կողմը՝

ՄԱԿ-ի եվրոպական տնտեսական հանձնաժողովի (ԵՏՀ) կայուն տրանսպորտի բաժին

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր մասնակցել ՄԱԿ-ի եվրոպական տնտեսական հանձնաժողովի Տեխնիկական ներդրման մարմնի (Technical Implementation Body) 8-րդ աշխատանքային հանդիպմանը, որով ապահովվում է Միջազգային ճանապարհային փոխադրումների կոնվենցիային միացող երկրների տեղեկատվական համակարգերի և Միջազգային ճանապարհային փոխադրումների էլեկտրոնային ընթացակարգի (eTir) հաղորդագրությունների փոխանակման աշխատանքների կազմակերպման սկզբնական ներդաշնակեցման խնդիրների դուրս բերումը, ինչպես նաև միասնական համակարգին ինտեգրման խնդիրների շուրջ լուծումների առաջադրումը:

5. Քննարկված թեմաները՝

Աշխատաժողովի շրջանակներում հավանության է արժանացել ՄԱԿ-ի եվրոպական տնտեսական հանձնաժողովի Տեխնիկական ներդրման մարմնի (Technical Implementation Body) 7-րդ աշխատանքային հանդիպման զեկույցը: ՄԱԿ եվրոպական տնտեսական հանձնաժողովի քարտուղարությունը ներկայացրել է eTIR միջազգային համակարգի և դրա

հետ կապված SS նախագծերի զարգացումը, ինչպես նաև ազգային մաքսային համակարգերի՝ eTIR միջազգային համակարգին փոխկապակցվածությանն առնչվող հարցեր: Ներկայացվել է նաև սեպտեմբերի 17-ին ու 18-ին ք. Երևանում ԵԱՏՄ անդամ պետությունների մաքսային ու SS փորձագետների մասնակցությամբ Բեռների միջազգային փոխադրումների էլեկտրոնային ընթացակարգի՝ ԵԱՏՄ-ի շրջանակում ներդրման խնդիրները ու առաջարկվող լուծումները:

Քարտուղարությունը ներկայացրել է նաև eTIR համակարգի հայեցակարգային, գործառութային ու տեխնիկական բնութագրերը. մասնավորապես՝ eTIR 4.3 տարբերակը (Version 4.3), eTIR 4.4 տարբերակը (Version 4.4), ինչպես նաև վերջինիս մեջ փոփոխություններ իրականացնելու մի շարք առաջարկներ:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հաշվի առնելով, որ Երևանում ս.թ. սեպտեմբերի 17-ին ու 18-ին տեղի ունեցած հանդիպման արդյունքում մշակվել է Բեռների միջազգային փոխադրումների էլեկտրոնային ընթացակարգի ներդրման միջոցառումների քարտեզ, որով ԵԱՏՄ անդամ պետություններին նախքան e-TIR-ին ամբողջապես ինտեգրվելը առաջարկվել են ժամանակավոր լուծումներ, ՀՀ-ի կողմից հոկտեմբերի 8-ի Տեխնիկական ներդրման մարմնի 8-րդ հանդիպման ժամանակ նշվել է, որ ներկայացված տեխնիկական լուծումները ներկայումս քննարկվում են ՀՀ-ի կողմից, այդ թվում՝ ԵԱՏՄ տարածաշրջանային eTIR հավելվածի միջոցով կամ ազգային eTIR հավելվածի միջոցով ԵԱՏՄ տարածաշրջանային, ինչպես նաև միջազգային eTIR հավելվածին ինտեգրվելու առումով:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

1. ՄԱԿ-ի եվրոպական տնտեսական հանձնաժողովի քարտուղարությունը ներկայացրել է Բեռների միջազգային փոխադրումների էլեկտրոնային ընթացակարգի շրջանակում լրացուցիչ տվյալներ ձեռք բերելու հնարավոր լուծումներ, ինչի շրջանակում Տեխնիկական ներդրման մարմինը խնդրել է քարտուղարությանը հաջորդ նստաշրջանին ներկայացնել տեխնիկական լուծումներն արտացոլող փաստաթուղթ:

2. Տեխնիկական ներդրման մարմինը հաստատել է eTIR 4.4 տարբերակում որոշակի տվյալների փոփոխություններ, այդ թվում՝ «Տրանսպորտի սարքավորման չափ ու տեսակ» տվյալների էլեմենտի, ինչպես TIR գործառնությունների հերթական համարի մասով: Վերջինիս մասով Տեխնիկական ներդրման կոմիտեն խնդրել է, որ քարտուղարությունը մյուս նստաշրջանին ներկայացնի այն տվյալների կոմպոնենտները, որոնք պետք է ներառվեն հերթական համարում, ինչպես նաև լրացուցիչ տվյալներ, որոնք կօգնեն ավելի լավ նույնականացնել այն երկիրը, որտեղ իրականացվում են TIR գործառնությունները:

3. Որոշվել է, որ ՄԱԿ-ի եվրոպական տնտեսական հանձնաժողովի 9-րդ և 10-րդ նստաշրջանները տեղի են ունենալու համապատասխանաբար՝ 2025թ. մարտի 12-ից 14-ը և սեպտեմբերի 22-ից 23-ը:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Միջոցառմանը մասնակցությունը հնարավորություն ընձեռեց տեղեկանալ Տեխնիկական ներդրման մարմնի գործունեության ընթացքին՝ կապված Բեռների միջազգային փոխադրումների էլեկտրոնային ընթացակարգի կիրառման հետ, ապահովել համապատասխան քվորում՝ որոշումների կայացման համար, ինչպես նաև ներկայացնել Հայաստանում այս ընթացակարգի ներդրման մասով ընթացիկ վիճակը:

Հայկական կողմը սեպտեմբերի 17-ին ու 18-ին Երևանում իրականացված քննարկման արդյունքների մասով մինչև Տեխնիկական ներդրման մարմնի հաջորդ նստաշրջան քարտուղարություն կներկայացնի առաջադրված ժամանակավոր լուծումների մասով իր դիրքորոշումը: Միաժամանակ, ԵԱՏՄ շրջանակում նախատեսվում է մեկ այլ աշխատանքային հանդիպում, որը հնարավորություն կտա հասկանալ ԵԱՏՄ-ի՝ որպես մեկ միավորի ինտեգրման հնարավորությունը՝ ռեգիոնալ հավելվածի ներդրման արդյունքում, ինչպես նաև ԵԱՏՄ-ի հետ ընդհանուր սահման չունենալու հանգամանքով պայմանավորված՝ Հայաստանում ազգային հավելված ներդնելու հնարավորությունը, և դրա շրջանակում փոխկապակցվածության ապահովումը ԵԱՏՄ տարածաշրջանային հարթակի և eTIR միջազգային հարթակի հետ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Шмуцер 14.10.2024 թ.